

Հետաքրքրական է որ հնագոյն պարսկական գորգերուն մասին կ'ըսուի. «Քաջալերիչ պատճառներ ունինք ինքզինքնուս հաւատտելու որ զեռ քանի մը կտորներ կը մնան, հիւսուած ժԳ եւ ժԳ դարերուն Պարսկաստանի մէջ, իրապէս չենք կրնար վերջնականորէն համոզուիլ

մէջ րնակեցնելու: Անոնք մոռցած են կրօնքին, բացի քիչ մը քրիստոնէութենէ»: (The Present State of Persia. — Mons. Sanson, London, 1695, p. 118). Արդեօք Սանսոն իրապէս պատճառ մը ունի՞ր Աֆղաններուն Հայ-Քրիստոնեայ ծագման մասին, թէ պարզապէս հին աւանդութեան մը արծաղանդ կ'ըլլայ, դժուար է ըսել: Իրաւ է, թիմուրի ժամանակ, ժԳ դարու վերջը հայեր բնազաղթ եղան Սմրզանա, սակայն անիչ առջ ալ Աֆղաններ կային հօն, որոնք անտարակոյս Սմրառ Բազրատունիի հանդիպած հայօրդիներուն սերունդէն էին: Աֆղանները (տարապարձութիւն Աղանի) ժԶ դարու սկիզբը Պարսկաստանը գրաւեցին, Սպահանը ակերեցին եւ Պարսիկներուն ջարդեցին, իսկ Նոր Զուլայի հայերը ենթարկեցին անհարկի տուգանքի մը եւ կողոպուտի, քանի մը հայեր ալ մահացնելով: Այն ատեն Պարսիկները անտեղի կերպով հայերը Աֆղաններու կողմնակից ամբաստանեցին:

Մոնկոններու օրով Պաղսկան դեպքաններ, Պուտտայական քահանաներ Հընդկաստանէն, Փարիզցի, Իտալացի, եւ Չինացի հնարալէտներ, Բիւզանդացի եւ Հայ վաճառականներ կը խոսնուէին Արար պաշտօնատարներու, Պարսիկ եւ Հնդիկ աստղագէտներու եւ հաշուալէտներու հետ Մոնկոլ արքունիքին մէջ» (The Outline of History. — H. G. Wells, N. Y. 1922, p. 675):

1253ի տեսները, երբ Ուիլիամ ար Ռուպրիգիս վանականը Թաթարաց Մանկուխանի արքունիք կը հանդիպէր՝ հօն կը տեսնէ «Հայ մը, հետք երած էր խաչ մը, որ ըստ իրեն վանականի մը միջոցով երուսաղէմէն եկած էր, արծաթէ էր եւ չորս մարք կը կշռէր, չորս թանկագին դոհարներ ընդելուզուած էին չորս ծայրերուն վրայ, եւ հատ մըն ալ մէջտեղը: (Պաշին վրայ) մեր Փրկչին պատկերը, ան (խաչը) Մանկու խանին նուիրեց, եւ Մանկու անոր ըստ խնդրել ինչ որ կը ցանկար. ան (հայը) պատասխանեց, թէ ինքը Հայ կրօնաւորի մը որդին էր, որուն եկեղեցին Սարակիստաները աւերած էին, եւ իր օգնութիւնը խնդրեց եկեղեցին վերակառուցանելու համար: Այն ատեն ան (Մանկու) հարցուց թէ քանի՞ով կարելի է վերակառուցանել: Հայը պատասխանեց. երկու հարիւր Եւստուրթով, որ երկու հազար մարք կ'ընէ. եւ ան (Մանկու) հրամայեց յանձնակատարներ տալ անոր, ուղղեալ Պարսկաստանի եւ Մեծ Հայաստանի հարկերը տալու, որպէսզի յիշեալ դամարը արծաթով վճարեն: (Հայ) վանականը այս խաչը առէն տեղ իր հետ կը տանէր, եւ կրօնաւորներ տեսնելով անոր մեծ շահերը սկսան նախանձիլ» (էջ 66): Այլուր կը հաւատտէ որ Հայ եւ Յոյն այցելուներ՝ Պանին ներկայութեան իրենց զլխանոցները չէին հաներ. (էջ 70): Գարագորուծի մէջ «կային բազմաթիւ Քրիստոնեաներ, Հունդարացիներ, Ալաններ, Ռուղենցիներ, Վրացիներ եւ Հայեր, որոնք բոլորն ալ իրենց գերութենէն ի վեր հաղորդութիւն չէին տեսած, որովհետեւ Նեստորականները անոնց թոյլ չէին տար իրենց եկեղեցին մտնել, բացի երբ անոնք իրենցմէ մկրտուած ըլլային» (էջ 73, Voyages and Travels. — John Pinkerton, Vol. VII, London, 1811): Կ'երեւայ թէ Հայերը հօն եկեղեցի չունէին:

Թիմուրէնի Դամասկոսի արշաւանքէն վերջ «Ռոյր անոնք որ արուեստագէտ էին իրեն հետ Սմրզանա տարու ձերմակ Թաթարներու եւ Սերասախոյ ժողովուրդին հետ, որոնց մէջ բազմաթիւ Հայ քրիստոնեաներ կային»: Նոյն գրողը Սմրզամար հայերու զոյրթիւն օնենալը կը յիշէ: (Narrative. — Ruy Gonzalez, 1895, London, p. 288): Բոնապարթ այս ընտրեալ ժողովուրդը ետ չէր կրնար դանալ իր բնակավայրը: Երբ Աղ-Գոյունլու (ձերմակ Թաթարներ) վաթսուս հազարոց խումբ մը Թիմուրէն Պարսկաստանի Տամղանի մօտերը բանազաղթ հաստատուած էին՝ փորձեցին իրենց անտանելի վիճակէն ազատիլ եւ Սիւրիա վերադառնալ, Թիմուր անողորմ կերպով պատժեց զանոնք սրտկտոր ընելով եւ անոնց զլուխներով երկու կառուչն բուրդեր չինեց:

Կ'արժէ աւելի յորթլ եւ ինամքով գրաղիլ Թուրքեստանի եւ կեղրնական Ասիոյ մէջ զոյրթիւն օնեցած հին հայ գաղութներով, որոնք իրր զինուորական սահմանապահ թումրեր գործածուած էին մինչեւ Մասանաններու անկումը, ճիշդ ինչպէս որ Բիւզանդական կայսրերը Պալքաններու մէջ եւ Դանուրի երկայնքը կը հաստատէին զինուորական հոծ հայ գաղութներ, կամ Հոսմ իր հին օրերուն «Հայկական» կոչուած լեղէններ կը տանէր Բրիտանական կղզիները, զանոնք հօն կը տեղաւորէր՝ իր ակրապետութիւնը ապահովելու համար: